ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1958 Общественные науки

Ա. Ղազարյան

Հաղորդումներ

ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի Արխիվային ֆոնդերում պահվում են մեծ նկարիչ Հովհաննես Կոստանի Այվազովսկու հայերեն և ռուսերեն լեզուներով գրած նամակները, դիմումները, ինչպես և նրան ուղղած և նրա մասին գրած փաստաթղթերը, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում նկարչի կյանքի և գործունեության վերաբերյալ[1]։

Այվազովսկին իր ողջ կյանքը անց է կացրել Ռուսաստանում և արտասահմանում, եղել է նաև Անդրկովկասում և Հայաստանում։ Նա միշտ կապված է եղել Հայաստանի և հայ իրականության հետ, սիրել է նրա պատմությունը, նրա հնադարյան կուլտուրան և իր որոշ նկարներում աշխատել է վեր հանել հայրենի երկրի և ժողովրդի պատմության որոշ դրվագները։

1845 թ. մարտի 29-ին Հովհաննես Այվազովսկու կողմից կաթողիկոսին ուղղված մի նամակից երևում է, որ նա իր պատրաստակամությունն է հայտնել ծառայելու հայ մշակույթին։

«...Ինչ ի մասին առնն այնօրիկ, զորմէ պատմաբանէիք ի հայրապետական կոնդակի Ձերում, հոգ կալայց անշուշտ ի կատար ածել զմուտ և զելիս գործին՝ քաջ տեղեկացեալ ըստ պատճէնի առաքելոյ առ իս, առ ժամս պարտաւորութիւն անձին կալայ ծանուցանել ի միամտութիւն Վեհափառ Տէրութեան Ձերոյ զստացմանէ և առ յապայն հաղորդեցից Ձեզ նոյնպէս ոչ անագան քան զառաջին սուրհանգակաւ ստուգութեամբ տեղեկացեալ զորպիսութիւնէ ելից և մտից գործին...»[2]։

Հ. Այվազովսկին ամենայն սիրով հանձն է առել հայկական նոր կառուցվող վանքերի և եկեղեցիների նախագծերը հանելու։

Այդ մասին է վկայում 1845 թ. հունվար ամսին Էրիմի հայոց վանքերի և եկեղեցիների ընդհանուր հոգաբարձու Տովլաթյանի մի նամակը՝ ուղղած կաթողիկոսին, որտեղ գրված է.

«...Երեկեան օրն ըստացա պարոն Օհաննէսէն Այվազովսկոյ աշխատեալ և շինեալ բլանն ի Ֆեոդոսիա սուրբ Գեորգա ուխտատեղոյն, որ ըստ սմին ունիմ պատիւ մատուցանել առ ամենաողորմած Տեառնդ և խնդրել ի հասարակութենէն Ֆեոդոսիայի Հայոց ժողովրդոց՝ վերագարձուցանել և հրամանել սկսել շինութիւնն այս գարնան։

---

[1] Այս հաղորդման մեջ նշված նյութերից առավել կարևորներն ենք հրապարակում։

[2] Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, ֆաթ. դիվան, թղթ. № 116, վավ. № 43։

Պարոն Այվազովսկին մնաց այս ձմեռ ի Թեոդոսիա ըստ խնդրանաց իւր։ Ինքնակալ կայսերն ռուսաց հրաման տուաւ մինչև ցմայիսի 10 մնալ և Ղրիմու նահանգին, յոյս ունիմ, որ չի թողնեմ, մինչև ի գնալն Ղարասուպազարու եկեղեցոյ բլանն էլ շինել տամ...»։

Հ. Այվազովսկին 1846 թ. Օդեսայում և Թեոդոսիայում կազմակերպում է իր նկարների ցուցահանդեսը։ Այդ մասին 1846 թ. մայիսի 17-ին Թեոդոսիայից նա մի նամակ է գրում կաթողիկոսին, որով հայտնում է, որ մի քանի նոր նկարներ է նկարել, ցուցահանդես է կազմակերպել, որից հետո գնալու է Պետերբուրգ։ Նա միևնույն ժամանակ հայտնում է, որ Տավրիկյան (Ղրիմ) նահանգում միսիթարյան քարոզիչներ են երևացել և քայքայիչ դեր են կատարում հայկական համայնքներում։ Նա խնդրում է կաթողիկոսին միջոցներ ձեռք առնել արգելելու նրանց գործունեությունը և նրանց գրականության մուտքը Ռուսաստան։

Հ. Այվազովսկին 1846 թ. Թեոդոսիայից մեկնում է Պետերբուրգ, որտեղ 1849 թ. պրոֆեսորի կոչում են շնորհում նրան։ Հ. Այվազովսկին բոլոր միջոցներով օգնում և օժանդակում է օտարության մեջ ապրող կարիքավոր հայ ուսանողներին։

Այդ մասին վկայում է նշանավոր բանաստեղծ Մսեր Մսերյանի 1848 թ. հոկտեմբերի 25-ին Մանուկ բեյի որդի՝ Մուրադ Պեյին ուղղած հայատառ թուրքերեն նամակը, որով հայտնում է, որ Դոդոխյանը (բանաստեղծ) Հ. Այվազովսկու միջնորդությամբ մեկնել է Պետերբուրգ Ակադեմիա սովորելու համար։ Նամակում հայտնում է նաև, որ Հ. Այվազովսկին ամուսնացել է մի անգլուհու հետ և ժամանել է Մոսկվա ցուցահանդես կազմակերպելու համար, որից հետո վերադառնալու է Պետերբուրգ[1]։

Հ. Այվազովսկին, ինչպես երևում է, շատ ջերմ փոխհարաբերություն է ունեցել Ներսես Աշտարակեցու հետ և հարկ է համարել զանազան միջնորդություններով դիմել նրան[3]։

1866 թ. Տավրիկյան նահանգի քաղաքներից մեկում հրդեհվում է քաղաքի հայկական եկեղեցին։ Այդ մասին տեղի հոգևորականներից մեկը հայտնում է Հ. Այվազովսկուն։ Այվազովսկին իր 1866 թ. մայիսի 30-ին Թեոդոսիայից գրած պատասխան նամակում իր ցավակցությունն է հայտնում և հանձն է առնում նորակառույց եկեղեցու համար նկարել ս. Գեորգի նկարը։ Իր նամակում նա գրում է.

«Ընկալեալ պատուական նամակ սրբութեանդ՝ որ ի 6 ապրիլի, և անտի տեղեկացեալ ցաւալի հրկիզութիւն քաղաքիդ և եկեղեցւոյդ։ Կամակար յօժարութեամբ յանձն առնում աւասիկ գկատարումն առաջարկութեան արտի դիտապետիդ՝ նկարելով պատկեր մի սրբոյն Գէորգայ վասն սեղանոյ նորաշէն եկեղեցւոյ քաղաքիդ՝ ըստ հանգամանացն նշանակելոց։ Ի Ձերմէ սրբութենէտ ակն ունիմ, զի ըստ ցանկութեան սրտի մերոյ և Ձեր, յաջողեսցէ ինձ տէր ի գլուխ հանել ըստ արժանաւոյն զայս վաստակ, որով անշուշտ հաղորդակից

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթ. դիվան, թղթ. № 121, վավ. № 16։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Մսերյանների սրբ.. թղթ. № 207, վավ. № 1710։

[3] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթ. դիվան, թղթ. № 121, վավ. № 17։

գտայցեմ ես ընդ Ձեզ Աստուածածիր պարգևաց բարեխօսութեամբ քաջայաղթ անուանակցին Ձերոյ։

Հայցելով զօրհնութիւն ամենապատիւ տէրութեանդ Ձեր խոնարհ ծառայ Օհաննէս Այվազովսկիս[1]։

1857 թ. փետրվարի 13-ին մահանում է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը։ Նրա մահվան լուրը իսկույն տարածվում է ողջ հայության մեջ։ Այդ ժամանակ Այվազովսկին գտնվում է Փարիզում։ Նա, լսելով այդ մասին, 1857 թ. մարտի 24-ին Փարիզից ռուսերեն լեզվով մի նամակ է գրում Խաչատուր Լազարյանին։ Նամակից երևում է, որ Այվազովսկին սերտ կերպով կապված է եղել հայ հասարակության հետ և ապրել ու հուզվել է հայկական իրականության մեջ տեղի ունեցող կարևոր իրադարձություններով։ Իր նամակում Այվազովսկին հայտնում է, որ ինքը մտադիր է եղել նաև Ղրիմ գնալ, ապա այնտեղից մեկնել էջմիածին՝ եղբորը՝ Գաբրիել Այվազովսկուն եպիսկոպոս ձեռնադրել տալու նպատակով, սակայն կաթողիկոսի մահվան պատճառով հարկադրված է եղել հետաձգել իր մտադրությունը մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը։

Իր նամակում Հ. Այվազովսկին գրում է.

Милостивый государь, Христофор Екимович!

Давно я имел честь получить почтенное письмо Ваше чрез карабагского армянина, но так как письмо только рекомендательное и не имея ничего особенного сообщить Вам, не смел своим письмом беспокоить Вас при обширных занятиях Ваших.

Между тем мы постоянно имеем сведения об Вас чрез добрейших Мануга-Беев, с которыми, к большому нашему утешению, часто видимся. На днях Иван Мануилович передал мне содержание последнего письма Ивана Давидовича, в котором с известием о смерти патриарха Нерсеса, — пишет о желании видеть на таком месте брата моего Гавриила, то же самое и князь Семен Давидович пишет, из этого мы заключаем, что это есть общее Ваше мнение, что весьма тронуло брата, и меня очень радует, но вместе с тем постигаем вполне трудность и даже невозможность по сану его и по летам, но ежели желание будет общее, то, как говорят, Эчмиадзинский Синод имеет право посвятить в епископы, если он большинством будет избран в патриархи, кроме того, сизский патриарх имеет право посвятить тоже, но не константинопольский! Судя по слухам и по письмам, на Востоке все армяне будут за брата, нежели за другого, а про армян в княжествах нечего и говорить, они все до одного партизаны Гавриила, и именно теперь в Париже несколько лиц из разных сторон, и надо было видеть их восторг, когда я сообщил им о мнении, изложенном в письме Ивана Давидовича, все они взялись сообщить эту идею своим, в Константинополь, в Молдавию, в Персию. Нет сомнения, что ежели не будет препятствий по вышеуказанным причинам, то будет он избран, тем более ежели Вы возьметесь ходатайствовать

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթ. դիվան, թղթ. № 204, վավ. № 1130։

в Петербурге и в Закавказском краю, это то самое главное, как Вам известно. Брат Гавриил с нами едет в Крым, а оттуда мы намерены были поехать в Эчмиадзин по общему желанию константинопольских армян, чтобы скорее посвятить его в *եպիսկոպոս*, но теперь, по случаю смерти патриарха, придется отложить до избрания нового *կաթուղիկոսա* или как Вы посоветуете, так и исполним. Мы остаемся в Париже до 1 мая и потом возвращаемся в Крым по Дунаю и Одессу.

Прошу передать наше общее глубочайшее уважение Екатерине Мануиловне, Ивану Екимовичу и всему Вашему семейству.

С искренним уважением и с совершенною преданностью имею честь быть Вашего превосходительства покорнейшим слугой

И. АЙВАЗОВСКИЙ[1]

Հ. Այվազովսկին իր եղբոր՝ Գաբրիել Այվազովսկու մասին այն կարծիքն է ունեցել, որ նա մեծ բանասեր է, պատմաբան և նշանավոր կրոնական գործիչ։ Նա միշտ օգնել և օժանդակել է Գաբրիելին հոգևոր աստիճաններից վեր բարձրանալու գործում։ Այդ մասին վկայում է Հ. Այվազովսկու 1857 թ. ապրիլի 18-ին Փարիզից դարձյալ Խաչատուր Լազարյանին գրած ռուսերեն նամակը, որով հայտնում է, որ իր եղբորը Կ. Պոլսում եպիսկոպոս պետք է ձեռնադրեն, խնդրում է Լազարյանից, որ նախքան իրենց այնտեղ հասնելը, նա Կ. Պոլսի Հոգևոր ժողովին նամակներ գրի և իր եղբոր ձեռնադրության գործը ապահովի։ Նամակում խնդրում է նաև, որ միջնորդի Էչմիածնի և Պետերբուրգի սինոդի առաջ իր եղբորը Իեսարաբիայի թեմում համապատասխան աշխատանքի նշանակելու համար։ Այդ նամակում նա գրում է.

Милостивый государь, Христофор Екимович!

Примите мою душевную признательность за все добрые Ваши советы и сведения, так хорошо изложенные в обязательном письме Вашем. Может быть удастся брату Гавриилу в Константинополе посвятится в епископы, если будет на то общее желание там *Հոգևոր ժողովին* и тамошнего патриарха с утверждением сисского патриарха, так что и не нужно туда ездить, что весьма затруднительно. Не для достижения патриаршества, желательного скорее этот сан, а чтобы быть епархиальным, и именно в Кишиневе, при свидании с Вами брат передаст Вам все свои предположения, весьма полезные во всех отношениях. Вы можете много способствовать достижению этой цели, во-первых, два письма от Вас, одно в Константинопольский *Հոգևոր ժողովկ*, а другое тамошнему армянскому патриарху *(Հակոպոս)*, когда все они увидят Ваше участие и особенное желание в посвящении брата в *եպիսկոպոս*, то наверное сделают все возможное, здесь это общее мнение. Поэтому прошу Вас покорнейше принять на себя труд написать два письма на армянский и, не откладывая, отправить скорее в Константинополь, дабы к приезду нашему туда были бы получены. Вторая просьба в том, чтобы Вы исходатайствовали в Петербурге и в Эчмиадзинском Синоде об назначении брата бессараб-

[1] *Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Լազարյանների արխիվ, թղթ. № 104, վավ. № 78։*

ским епархиальным, чем он мог бы управлять даже не будучи епископом, как это бывало. Что же касается до патриаршества, то предоставим судьбе, хотя все письма и слухи весьма благоприятны для брата, но его пугает вдруг этакое место трудное, поэтому он более желает быть епархиальным пока. Выезжаем мы из Парижа 10 мая (нового стиля) и будем в Константинополе вероятно к концу мая, там брату нужно будет оставаться недели две, и в первых числах июня мы будем дома в Феодосии. Из Константинополя мы напишем к Вам, ежели осуществится желание наше.

Прошу передать наш усердный поклон Екатерине Мануиловне, Ивану Екимовичу и всем Вашим.

Брат Гавриил искренно благодарит Вас за доброе Ваше участие.

С чувствами глубочайшего уважения и преданности имею честь быть Вашего превосходительства покорнейший слуга

И. АЙВАЗОВСКИЙ[1]

Հ. Այվազովսկին 1868 թ. ուղևորվում է Կովկաս։ Նա լինում է Հյուսիսային Կովկասում, Դաղստանում, Սուխումիում, Անդրկովկասում։ 1868 թ. դեկտեմբերին գնում է Թբիլիսի՝ ցուցահանդես կազմակերպելու նպատակով, որտեղից նույն թվականի դեկտեմբերի 13-ին մի նամակ է գրում կաթողիկոսին, որով հայտնում է, որ ստացել է նրա նամակը, ցավ է հայտնում, որ չի կարող Հայաստան մեկնել՝ ցրտերի պատճառով, խոստանում է գարնանը լինել հայրենի երկրում, որը վաղուց էր ցանկանում տեսնել։

«Ընկալեալ զգիր սիրոյ և օրհնութեան Վեհիդ՝ լցայ ուրախութեամբ մեծաւ, և ահա ջերմ սրտիւ պատասխանեմ։

Թէպէտ վաղ ուրեմն պարտէր ինձ այց ելանել Հայրենի անմոռաց երկրիս և տեսութեամբ նորին զուարճանալ՝ վայելելով սէր և զօրհնութիւն Հոգի հասարակաց, սակայն դառնաշունչ աւուրք ձմեռնային եղանակի արգելին զիս ի Տփխիս։ Իայց ի հասանել գարնան, յամսեանն ապրիլի, յաջողութեամբ Տեառնէ և աղօթիւք Վեհափառութեան Ձեր անշուշտ կատարեցից զուխտ իմ, որով և լցցի ինձ սրտիս, որ ի վաղուց հետէ տածէի յիսս[2]։

Հ. Այվազովսկին Մոսկվայում հետաքրքրվել է հայկական կուլտուրական հաստատություններով, այցելել և հետաքրքրվել նրանց աշխատանքներով։ Այդ տեսակետից ուշագրավ է Մսեր Մսերյանի 1857 թ. հոկտեմբեր ամսին Մոսկվայից «Արշալույս Արարատյան» թերթի համար գրած հոդվածը, որից պարզվում է, որ նույն թվականի հոկտեմբերի 10-ին Հ. Այվազովսկին իր եղբոր՝ Գաբրիելի հետ, այցելել են Լազարյան ճեմարանը, ստուգել և հետաքրքրվել են աշակերտների առաջադիմությամբ, ապա այցելել են նաև հայկական եկեղեցիները և այլ վայրեր։

Այդ մասին Մ. Մսերյանը 1857 թ. հոկտեմբեր ամիսին Մոսկվայից գրում է. «Ամսոյս 10-ին Քնֆելեն եկաւ ի Մոսկվա գերապատիվ և գիտնական Հայր Գաբրիէլ վարդապետն Այվազովսքի և չորս օր կենալէն ետև, ամսոյս 14-ին ուղևորվեցաւ ի Փեթերպուրկ յուր սիրելի եղբոր՝ վսեմաշուք Հովհաննէս

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Լազարյանների արխիվ, թղթ. № 104, վավ. № 79։

[2] Հայկական Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթ. գիվան, թղթ. № 207, վավ. № 879։

աղալի ընկերակցությամբ։ Այս կարճ միջոցիս մէջ հիշյալ գերյարգո հայրն քաղաքիս մէջ քանի երևելի տեղերը և եկեղեցիները պտտելէն ետքը, արժանացոյց յուր ցանկալի այցելության և ղէազարյան ճեմարանը, ուր յուրաքանչյուր դաստանց մէջ մնալով մէկ րոպէ, վերահասու եղև աշակերտաց ուսմանց...»։

[1] ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Մսերյանների արխիվ, թղթ. № 207, վավ. № 2163։